ՀԱՅՏ

Հայաստանի Հանրապետության Վանաձոր համայնքի տնտեսական և սոցիալական ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված սուբվենցիա

| | |
|---|---|
| Ծրագրի անվանումը | ***Վանաձոր համայնքի Չուխաջյան, Լալվարի փողոցների և կենտրոնական մայթերի կապիտալ նորոգում*** |
| Մարզ | ԼՈՌԻ |
| Համայնքը /համայնքները | ՎԱՆԱՁՈՐ |
| Համայնքի /բնակավայրի հեռավորությունը մայրաքաղաք Երևանից, ինչպես նաև մարզկենտրոնից | Երևանից-125կմ<br>մարզկենտրոն է |
| Համայնքի /բնակավայրի բնակչությունը | 77600 մարդ /ըստ ԱՎԾ-ի/ |
| Սահմանամերձ, բարձր լեռնային համայնք /բնակավայրի | ----- |
| Համայնքի բնակավայրի ենթակառուցվածքների վերաբերյալ հակիճ տեղեկատվություն | Լոռու մարզկենտրոն Վանաձորը գտնվում է Հայաստանի հյուսիսային մասում: Զբաղեցնում է 2599.33 հեկտար մակերես: Հեռավորությունը Երևանից ավտոմոբիլային ճանապարհով 125 կմ է, երկաթգծով՝ 224 կմ: Ծովի մակերևույթից բարձր է 1353մ: Վանաձորը տարածքային վարչական կենտրոն է, տրանսպորտային հանգույց՝ այստեղով են անցնում Երևան–Թբիլիսի երկաթգիծը, ինչպես նաև միջպետական կարևորագույն ավտոճանապարհներ:<br>➢ Համայնքի բնակիչների 73,5% ապահոված է շուրջօրյա ջրամատակարարմամբ, շուրջ 90% ունի կենտրոնացված կոյուղու համակարգ:<br>➢ Համայնքի ողջ տարածքը մատակարարվում է հեռախոսային և ինտերնետային որակյալ կապով:<br>➢ Գազամատակարամամբ ապահովված է բնակչության շուրջ 98%::<br>➢ Գիշերային լուսավորվածությամբ փողոցների տեսակարար կշիռն ընդհանուրի մեջ կազմում է 82%, լուսավորված փողոցների ընդհանուր երկարությունը 105 կմ է:<br>Բարեկարգ համայնքային փողոցների մակերեսի տեսակարար կշիռն ընդհանուրի կազմում՝ 59% է |
| Ծրագրի ընդհանուր նկարագրությունը և դրա իրականացման անհրաժեշտությունը | Փողոցներ՝<br>1.Չուխաջյան փ երկարությունը 2250մ լայնությունը- 8-12մ,<br>2.Լալվարի փ. երկրությունը 290մ, լայնությունը 10 մ<br>**Մայթեր՝** |

| | |
|---|---|
| | 1. Նժդեհի փ.՝ Տ.Մեծից դեպի Բանակի փ..<br>2. Մխ Գոշ փ.<br>3. Տերյան փ<br>4.Վարդանանց փ.<br>**Զուխաջյան** փողոցը գտնվում է գետի հարակից տարածքում, այն կապում է Դիմաց թաղամասը Լագեր թաղամասի հետ: Զուխաջյան փողոցում գործում են թիվ 24 դպրոցը, թիվ 19 մանկապարտեզը: Խիտ բնակեցված թաղամասի գլխավոր փողոցն է: Բնակչության թիվը այդ հատվածում մոտ 25 000 է:<br>Նշված փողոցը գտնվում է խիստ անբարեկարգ վիճակում, ինչը խոչընդոտում է տրանսպորտի բնականոն երթևեկությանը և համայնքի բնակիչների ազատ և հարմարավետ տեղաշարժմանը, ինչպես նաև տնտեսվարող սուբյեկտների բնականոն գործունեությանը և նորերի ստեղծմանը:<br>Փողոցնի կապիտալ նորոգման արդյունքում կունենանք բարեկարգ, ասֆալտապատ, գեղեցիկ նշագծված փողոց՝ բազալտե եզրաքարերով սահմանազատված:<br>Զուխաջյան փողոցի հիմնանորոգման անհրաժեշտությունը բխում է, առաջին հերթին համայնքի տվյալ հատվածի բնակչությանն առավել հարմար կենսապայմաններով ապահովելը, նորմալ ենթակառուցվածքներ ունենալը, ինչպես նաև զարգացնելու զբոսաշրջություն և տնտեսվարող սուբյեկտների բնականոն գործունեությունը:<br>Նշված փողոցը ունի բավականին մեծ ստրատեգիական նշանակություն: Դրա վերակառուցումը կբեռնաթափի ներկայումս խիստ ծանրաբեռնված Երևանյան խճուղին, որը Վանաձոր-Դիլիջան-Երևան գլխավոր ճանապարհն է:<br>Քանի որ, փողոցը գտնվում է գետի հարակից տարածքում հնարավոր է կազմակերպել քայլարշավներ, նպաստել զբոսաշրջության զարգացմանը, ինչպես նաև տնտեսվարող սուբյեկտների գործունեությանը:<br>Կապիտալ վերանորոգման արդյունքում տվյալ հատվածներում էապես կավելանա բնակչության հոսքը, որը ներդրողների համար գրավիչ միջավայր է ստեղծում:<br>Նշված փողոցից օգտվում է քաղաքի բնակչության շուրջ 35%-ը:<br>**Լալվարի փ.** այն Վանաձորի բուսաբանական այգի տանող ճանապարհն է, գտնվում է անբարեկարգ վիճակում:<br>Բուսաբանական այգին Վանաձորի զբոսաշրջային կենտրոններից մեկն է, որտեղ հասնելու գլխավր ճանապարհը Լալվարի փողոցն է: |

| | |
|---|---|
| | Փողոցի վերականգնումը նոր շունչ կտա բուսաբանական այգուն, նպաստելով զբոսաշրջության զարգացմանը:<br>Մայթեր<br>**Նժդեհի փ՝ Տ.Մեծից դեպի Բանակի փ.** հատվածը Փողոցին հարակից մայթը գտվում է անմխիթար վիճակում: Այն Վանաձորի բժշկական կենտրոն տանող հիմնական փողոցն է: Մայթերի անբարեկարգության պատճառով բնակիչերն օգտվում են փողոցից, որն անվտանգության առումով բավականին խնդիրներ է առաջացնում: Խիստ անհրաժեշտ է մայթերի վերականգնումը՝ բնակչության հարմար պայմաններ ստեղծելու համար:<br>**Վարդանանց՝ Վարդավառի հրապարակից-Տերյան խաչմերուկ:** Քաղաքի երկրորդ գլխավոր փողոցն է: Տիգրան Մեծ պողոտայի զուգահեռ փողոցը: Քաղաքի խիտ բնակեցված հատվածներից է: Մայթի հարակից տարածքներու մ կան 50 և ավել տնտեսվարող սուբյեկտներ, և երաժշտական դպրոց, թիվ 1 դպրոցը, Էվրիկա դպրոցը, կենտրոնական գրադարանը, Արցախ պուրակի մի հատվածը, արվեստի քոլեջը, Հարկային տեսչությունը և այլն:<br>Բնակչությունը մոտ 10-15 000 մարդ: Շահառուները մոտ 20000:<br>**Մխ.Գոշի՝** հարակից տարածքում են գտնվում Տարոնի ոստիկանական բաժանմունքը, Անձնագրային վարչությունը, Լոռո մարզի ընդհանուր իրավասության դատարանը, մասավոր և այլ պետական կառույցներ: Քաղաքի ամենաբանուկ մայթերից մեկն է:<br>**Տերյան փ.** Տիգրան Մեծ պողոտայի հարակից փողոցն է, գտնվում է անբարեկարգ վիճակում: Հարակից տարածքում տեղակայված են դպրոցներ, 3-րդ բանակային կորպուսը, մի շարք բնակելի շենքեր, մասնավոր կառույցներ:<br>**Վարդանանց՝ Վարդավառի հրապարակից-Տերյան խաչմերուկ:** Քաղաքի երկրորդ գլխավոր փողոցն է: Տիգրան Մեծ պողոտայի զուգահեռ փողոցը: Քաղաքի խիտ բնակեցված հատվածներից է: Մայթի հարակից տարածքներու մ կան 50 և ավել տնտեսվարող սուբյեկտներ, և երաժշտական դպրոց, թիվ 1 դպրոցը, Էվրիկա դպրոցը, կենտրոնական գրադարանը, Արցախ պուրակի մի հատվածը, արվեստի քոլեջը, Հարկային տեսչությունը և այլն:<br>Բնակչությունը մոտ 10-15 000 մարդ: Շահառուները մոտ 20000: |
| Ծրագրի ակնկալվող արդյունքները, որոնց միջոցով պետք է հասնել ծրագրի իրականացման նպատակին | Համայնքի 2018-2021թթ. զարգացման ծրագրով նախատեսվում է համայնքի փողոցների կապիտալ վերանորոգումը: Տվյալ ծրագրի իրականացումն ունի |

| | |
|---|---|
| | երկարաժամկետ բնույթ, որն իր ազդեցությունը կունենա համայնքի բնակիչների և այցելուների վրա:<br><br>Ծրագրի արդյունքում կունենանք<br>• տրանսպորտային ենթակառուցվածքների բարեկարգ և գրավիչ վիճակ<br>• տրանսպորտային միջոցների և հետիոտների համար ճանապարհային երթևեկության անվտանգության բարելավում<br>• ոչ կենտրոնական թաղամասերի բնակիչների համար զբոսանքի վայրեր<br>• փողոցներին հարակից գործող բիզնեսների աճի խթանում /մարդկանց հոսքի ավելացում/<br>• նոր բիզնեսների համար գրավիչ միջավայրի ստեղծում<br>• տուրիզմի զարգացում |
| **Ծրագրի արդյունքներին հասնելու գործողությունները և միջոցառումները** | 1. Նախագծանախահաշվային աշխատանքներ /20 օր/<br>2. Փողոցների կապիտալ նորոգման մրցույթի հայտարարում և պայմանագրերի կնքում /40-60 օր/<br>3. Շինարարական աշխատանքներ<br>4. Ծրագրի ավարտ<br>5. Մշտադիտարկում /ծրագրի ընթացքում/ |
| **Ծրագրի իրականացման արդյունքում համայնքին սեփականության իրավունքով պատկանող հիմնական միջոցների արժեքի ավելացում** | Ծրագրի իրականացման արդյունքում կբարձրանա տվյալ տարածքի նախահաշվային արժեքը մոտ 414 մլն-ով: |
| **Ծրագրի ազդեցությունը համայնքի և շահառուների վրա** | Ծրագրի իրականացման արդյունքում կունենանք բարեկարգ և կապիտալ նորոգված 2500մ փողոց և կապիտալ նորոգված մայթեր:<br>Ծրագրի շահառուները կլինեն քաղաքի շուրջ 35 հազ բնակիչները: Վերոնշյալ փողոցների և մայթերի հարակից տարածքներում են գտնվում են դպրոցներ մանկապարտեզներ, պետական և մասնավոր կառույցներ, տնտեսվարող սուբյեկտներ:<br>Փողոցների և մայթերի հիմնանորոգումը կնպաստի քաղաքի տնտեսական աճին, կբարձրանա ճանապարհային երթևեկության անվտանգության աստիճանը, կավելանան ներդրողների շահագրգռվածությունը տվյալ հատվածներում ներդրումներ կատարելու համար, որն էլ կնպաստի համայնքի բյուջեի մուտքերի աճին:<br>Կբեռնաթափի Վանաձոր-Դիլիջան գլխավոր ճանապարհը՝ Երևանյան խճուղին<br>Վերոնշյալը դրական ազդեցություն կունենա համայնքի բնակիչների և այցելուների վրա: |

| | |
|---|---|
| Ծրագրի իրականացման ընթացքում և արդյունքում ստեղծվող աշխատատեղեր | *Ծրագրի իրականացման ընթացքում կստեղծվեն 30-35 ժամանակավոր աշխատատեղ:*<br><br>*Բարեկարգ ճանապարհների և մայթերի հարակից տարածքները կնպաստեն տնտեսվորող սուբյեկտների զարգացմանը, նոր աշխատատեղերի ստեղծմանը:* |
| Համայնքի նախորդ տարվա բյուջեն և բյուջեի կատարողականը | *Նախորդ տարվա բյուջեն՝ 3330991300 դրամ.*<br>*Ներկայացնել նախորդ տարվա բյուջեն, ծախսերը և կատարողականը՝ առանձնացնելով բյուջեի վարչական և ֆոնդային մասերը, իսկ բյուջեի ֆոնդային մասից ծախսերը ներկայացնել առանձին բացվածքով:* |

| | Պլանը | Փաստացին | Տոկոսը |
|---|---|---|---|
| ***Ընդամենը՝ համայնքի բյուջեի մուտքեր*** */1+2-3/, որից* | 3330991300 | 3015788600 | 90.5 |
| ***Ընդամենը՝ համայնքի բյուջեի եկամուտները*** */1.2+2.2-3/ այդ թվում՝* | 3063676800 | 2748474100 | 89.7 |
| *1. Վարչական բյուջեի եկամուտներ, որից՝* | 2599968200 | 2603930400 | 100.2 |
| *1.1 Վարչական բյուջեի տարեսկզբի ազատ մնացորդ* | 23073800 | 23073800 | 100 |
| *1.2 Վարչական բյուջեի եկամուտներ, որից՝* | 2576894400 | 2580856600 | 100.2 |
| *- Սեփական եկամուտներ* | 1000969900 | 1004932100 | 100.4 |
| *2. Ֆոնդային բյուջեի եկամուտներ, որից* | 886159100 | 561858200 | 63.4 |
| *2.1 Ֆոնդային բյուջեի տարեսկզբի ազատ մնացորդ* | 244240700 | 244240700 | 100 |
| *2.2 Ֆոնդային բյուջեի եկամուտներ* | 641918400 | 317617500 | 49.5 |
| *3. Վարչական բյուջեի պահուստային ֆոնդից ֆոնդային բյուջե կատարվող հատկացումներից մուտքեր* | 155136000 | 150000000 | 96,7 |
| ***Ընդամենը՝ համայնքի բյուջեի ծախսեր*** */1+2-3/, որից՝* | 3330991300 | 2756996200 | 85,8 |
| *1. Վարչական բյուջեի ծախսեր* | 2599968200 | 2486071800 | 95,6 |
| *2. Ֆոնդային բյուջեի ծախսեր* | 886159100 | 420924400 | 47.5 |
| ***Հողի և գույքի օտարումից մուտքեր*** | -141530000 | -222774400 | 157.4 |
| ***Համայնքի ֆոնդային բյուջեի փաստացի ծախսերը*** */Ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսեր/, որից՝* | 1027689100 | 643698800 | 62.6 |
| *- ճանապարհաշինություն* | 307501200 | 122929202 | 40.0 |
| *- շրջակա միջավայրի* | 23583500 | 17137991 | 72.7 |

| | | | |
|---|---|---|---|
| պաշտպանություն | | | |
| - ընդհ. բնույթի հանրային ծառ. | 107039200 | 94224141 | 88.0 |
| - ջրամատակարարում | 157815200 | 157814603 | 100 |
| - փողոցային լուսավորություն | 12500000 | 8527018 | 68.2 |
| - Կրթություն | 91799000 | 0 | 0 |
| - բնակարանային շինարարություն | 236201000 | 171709040 | 72.7 |
| - մշակութային ծառայություններ | 91250000 | 71356805 | 78.2 |

**Համայնքի ընթացիկ տարվա բյուջեն**

***2824182000*** *դրամ.*

*Ներկայացնել ընթացիկ տարվա կանխատեսվող եկամուտները, պլանավորված ծախսերը՝ առանձնացնելով բյուջեի վարչական և ֆոնդային մասերը, իսկ բյուջեի ֆոնդային մասից պլանավորված ծախսերը ներկայացնել առանձին բացվածքով:*

| | Պլանը |
|---|---|
| ***Ընդամենը՝ համայնքի բյուջեի եկամուտների պլանավորում*** *այդ թվում՝* | 2824182000 |
| *- Վարչական բյուջեի եկամուտներ, որից՝* | 2824182000 |
| *- սեփական եկամուտներ* | 1043838300 |
| *- Ֆոնդային բյուջեի եկամուտներ* | 0 |
| ***Ընդամենը՝ համայնքի բյուջեի ծախսեր,*** *որից՝* | 2824182000 |
| *- Վարչական բյուջեի ծախսեր* | 2824182000 |
| *-Ֆոնդային բյուջեի ծախսեր* | 0 |
| ***Հողի և գույքի օտարումից մուտքեր*** | -113390000 |
| ***Համայնքի ֆոնդային բյուջեի փաստացի ծախսերը*** */Ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսեր/, որից՝* | 110390000 |
| *- ճանապարհաշինություն* | 16000000 |
| *- շրջակա միջավայրի պաշտպանություն* | 27000000 |
| *- ընդհ. բնույթի հանրային ծառ.* | 3390000 |
| *- ջրամատակարարում* | 0 |
| *- փողոցային լուսավորություն* | 8000000 |
| *- Կրթություն* | 0 |
| *- բնակարանային շինարարություն* | 56000000 |
| *- մշակութային ծառայություններ* | 0 |

**Համայնքի ընթացիկ տարվա բյուջեի նախագծով կանխատեսվող բյուջետային մուտքերի (ներառյալ ֆինանսական համահարթեցման դոտացիայի գծով կանխատեսվող մուտքերը) հաշվին նշված ծրագրի իրականացման անհնարինության հիմնավորումը (համապատասխան հաշվարկներով**

*Համայնքի ընթացիկ տարվա կանխատեսվող ֆոնդային բյուջեի մուտքերի՝ 110390000 ՀՀ դրամ և ֆինանսական համահարթեցման դոտացիայի գծով մուտքերի՝ 1712214900 ՀՀ դրամ հաշվին ծախսերում ներառվել են համայնքային ծրագրերն ըստ իրենց առաջնահերթությամբ և վերոնշյալ ծրագրի համար հնարավոր չէ գումար հատկացնել:*

| | |
|---|---|
| Ծրագրի ընդհանուր բյուջեն, այդ թվում՝ | 438 246 270 *դրամ (100%)* |
| - շինարարական օբյեկտների նախագծման արժեքը | 8285000 դրամ, |
| - նախագծանախահաշվային փաստաթղթերի պետական փորձաքննության ծառայության արժեքը, | 828 500 դրամ |
| - տեխնիկական հսկողության ծառայությունների արժեքը՝ | 6620000 դրամ |
| - հեղինակային հսկողության ծառայությունների արժեքը՝ | 1656000 դրամ |
| - գոյություն ունեցող շենք-շինությունների տեխնիկական վիճակի վերաբերյալ փորձաքննության ծառայության արժեքը՝ _________ դրամ, | - |
| ինչպես նաև առանձին ներկայացնել հասարակական շենքերի և բազմաբնակարան շենքերի ընդհանուր օգտագործման գույքի կառուցման/նորոգման դեպքում՝ էներգախնայողության միջոցառումների արժեքը _________ դրամ | - |
| Համայնքի կողմից ներդրվող մասնաբաժնի չափը | *197 210 821,5 դրամ (45%)* |
| Այլ ներդրողներ | *.......... դրամ ( .... %), նշել ներդրողի անունը:* |
| Ծրագրի իրականացման տևողությունը | *Ակիզբը հունիս 2020.թ. Տևողությունը 4-5 ամիս* |
| Ծրագրի ծախսերը | Ծրագրի ընդհանուր բյուջեն 438 246 270 |

| *Անվանում* | *Գումար հազ դրամ* |
|---|---|
| *Փողոցներ* | |
| *Չուխաջյան փ.* | *335388.00* |
| *Լալվարի փ.* | *37209.07* |
| *Մայթեր* | |
| *Նժդեհի փ.՝ Տ.Մեծից դեպի Բանակի փ.* | *65649.20* |

| | | |
|---|---|---|
| | Մխ Գոշ փ. | |
| | Տերյան փ | |
| | Վարդանանց փ. | |
| **Ամսաթիվ** | *1 փետրվար 2020թ* | |

***Նախահաշիվները կցվում են***

**ՋԾ, ԱԿ և ՏՏ բաժնի պետ՝** ________________ Լ.ԴԱՎԹՅԱՆ

+374 44 040 133,
vanadzorcity@mail.ru

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ________________ Մ.ԱՍԼԱՆՅԱՆ

(անունը, ազգանունը)

Կ.Տ.